

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կօպէկ:

Գ. Ա.

Ինչպէս կ'մենում էք, պ. Նազարեանց, բայց դա կ'ատարեալ յանդգնուած է ձեր կողմից: Եթէ դուք այդքան էլ չէք հասկա-
նում ռուսաց լեզուն, դոնէ օգուտ կը բազէիք:
Նաւթ—ծախող (ինչպէս դուք ինքեզնի ծաղրեցիք
Միւսուխ մէջ)՝ Հաղպատեանցի բառգրքովից, որ
176-դ երեսը բաց անելով, դուք կարող էիք հա-
մողկել, որ заповѣдате նշանակում է ոչ թէ ար-
գել է, այլ պատուիրել: Չէ, պ. Նազա-
րեանց, ոչ թէ այն է խաչատուրովիւն, որ նաւթ
—ծախողները, բարոճածք անելով միւս բառարա-
ներից, առեձեռն բառգրքովիներ են կազմում, այլ
այն՝ որ ձեզ պէս լեզուներն անհեղինակը լեզու-
ները միայն դատաւորութիւն են դրած, ի հարկէ, ձեզ
պէս ռուսներն լեզու դիտեցողից չէր կարելի պա-
հանջել, որ դուք գնահատէիք թէ՛ որքան մեծ է
զանազանութիւնը ռուսաց բնագրի: Երկրորդ հայե-
րէն թարգմանութեան լեզուների մէջ Ռուսներն լե-
զու դիտողը կարող է միայն զմրմնեալ, թէ ինչպէս
կարելի էր այնպիսի անհոռի դրած բնագրից
երկու տող մինչև անգամ թարգմանել: Սրեմ սխա-
լի էր արել ի՛նչ որքան քան փոքրիկ խումբը, որ կազմ-
վեցաւ անցիկ տարի և պարսպաւում էր մանկական

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յ.Ա.ՆԱՆԵԱՆ - ՄԱՐԻԱՄԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
ՏԱՐԻԳՐԱՐՁԸ

Կիրակի, յունիսի 1-ին, կատարվեցաւ Մա-
րիամեան-Յովնանեան օրհորդաց ուսումնարա-
նի տարեդարձը. ժամը տասին սկսվեցաւ ս.
պատարագը Կուսանաց եկեղեցում, որից յե-
տոյ կատարվեցաւ հանգուցեալ տիկին Յով-
նանեանցի և նրա հանգուցեալ զաւակներին
հոգեհանգիստը: Ա. պատարագը աւարտվե-
լուց յետոյ եկեղեցական դասը ժողովրդի և
ուսումնարանի աշակերտուհիներին և ուսու-
ցիչներին հետ միասին գնացին ուսումնարան,
որի դահլիճում կարգացվեցաւ ուսումնարանի
անտեսական և ուսումնական հաշիւը և
եղաւ պարգևաբաշխութիւնը: Դահլիճը զար-
դարված էր թագաւոր Կայսեր, հանգուցեալ
Կայսրուհու, Ահապատ. Կաթողիկոսի, հան-
գուցեալ Դաբրիէլ արքեպիսկոպոսի, Յ. Յովնա-
նեանցի և նրա հանգուցեալ կողակցի պատ-
կերներով. դահլիճի հարեան սենեակում
մէկ երկայն սեղանի վրա շարված էին աշա-
կերտուհիներին ձեռագործները, իսկ միւս սե-
նեակում շարված էին աշք հրապարակող
դասագան խմբիչներ և քաղցրաւնիք թէ-
հուրեր և թէ աշակերտուհիներին համար:
(Եթէ ուսումնարանը իսկապէս կարօտութիւն
ունէր վիճակաւաղի մէջ, մենք չենք հասկա-
նում այս շարքութեան նշանակութիւնը):

Հանգէսը սկսվեցաւ ուսումնարանի կրօնուսոյց
հայր Արքեպիսկոպոսին ձեռնով, որը սե գոյ-
նըրով նկարագրելով (չը նայելով որ այնպէս սե
չէր) երեք տարի առաջ մեր աղքատ օրհորդների
կրթութեան դրութիւնը, յայտնում էր այն
միտքը, որ Մարիամեան-Յովնանեան ուսում-
նարանի բացվելով, միջոց տրվեց հարկաւա-
ւոր աղքատ օրհորդներին կրթութիւն, լուսա-
ւորութիւն ստանալ և լաւ մայրեր դառնալ:
Ապա խօսելով ուսումնարանի հոգաբարձուների
մասին, հայր Արքեպիսկոպոսը շնորհակալութեամբ
յիշում էր նրանց եռանդը և գործունէու-
թիւնը, աւելացնելով հանգուցեալ Դաբրիէլ
արքեպիսկոպոսի և Կուսանաց վանքի մի քանի
կոյսերի ունեցած խնամքը այդ ուսումնարանի

վրա: Տէր-հօր ձառնից յետոյ և առհասարակ
ամեն ձառնաւորութիւնից յետոյ աշակերտու-
հիները երգում էին ազգային երգեր:

Երգից յետոյ խօսեց ուսումնարանի տեսուչ պ.
Ջիզիանեանը, որը համառօտ կերպով ներ-
կայացնելով ուսումնարանի անտեսական և
ուսումնական դրութիւնը, (նրա ձառնից խնաց-
վեցաւ, որ ուսումնարանը ունի վեց դասա-
տուններ՝ երեք պատրաստականներ, առաջին,
երկրորդ և երրորդ դասատուն մօտ 160
աշակերտուհիներով. այդքան աշակերտուհի-
ներին մօտ 3/4 Յովնանեան սանուհիներ են,
իսկ 1/4-ը թօշակաւոր աշակերտուհիներ):
Երկրորդ, որ միւս ուսումնական տա-
րին կը բացվի չորրորդ դասատուն ևս,
ուր ուրիշ առարկաների թիւում հաշուա-
պահութիւն ևս դաս կը տրվի: Խօսելով
ուսումնարանի ուսումնական դրութեան մա-
սին, ուսումնարանի տեսուչ պ. Ջիզիանեանը
այնպիսի պայծառ գոյններով նկարագրեց ուսու-
մնարանի ուսուցիչներին և իր գործունէու-
թիւնը և աշակերտուհիներին առաջադիմու-
թիւնը, որ, կարծես, աշխարհիս երեսին միակ
օրինակելի, զուրկ ամեն պակասութիւններից
ուսումնարանը լինէր Յովնանեան-Մարիամեան
դպրոցը: Մի այդպիսի ինքնագովութիւն մենք
մեր կենցեղում առաջին անգամ ենք լսում
մի տեսչի բերանից: Պ. տեսուչը վերջացնե-
լով իր հաշիւը, սկսեց պարզաւոր բաժանել
առաջադէմ աշակերտուհիներին. պարզաւոր
զանազան պատկերազարդ մանկական գրքեր և
աւետարաններ էին: Միայն աշակերտուհիներ-
րից մէկը Յակոբեան աղքատնուով, որ ուսու-
մնարանի ամենաառաջադէմ աշակերտուհին
է, կարմիր ժապուէտով մէկ պակաս ստացաւ:
Այդ մի և նոյն աշակերտուհին անգիր մէկ
ձառ. կարգաց, որ բոլորի վրա լաւ տպաւորու-
թիւն գործեց: Ապա սկսվեցաւ ձեռագործների
վիճակաւաղը և դրանով վերջացաւ հանգէսը:

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՒՅ

Մայիսի 6-ին

Ալեքսանդրապոլի հայ թատերասիրաց խումբը
մասնակցութեամբ մեծապատիւ պարոնայց Եղի-
կեանցի, Թովմաթեանցի և Ալեքսանդրեանցի (ե-

րիտասարդ հայ օֆիցերներ են) ներկայացրեց Պէ-
պոս պիեսան յօգուտ վանայ սովելոց, զիւաւորա-
պէս յիշեալ պարոնների գովելի առաջադրու-
թեամբ:

Ներկայացման առթիւ արդիւնք դոյացաւ ընդա-
մենը 333 բուրլի 10 Կ., որի համառօտ հաշիւը
ուղարկելով պարոն, խնդրեմ բարեհաճէք զետեղել
«Մշակ» ի յառաւիկայ թերթերում:

Մուտք. Տոմարների վաճառումից 276 ր. 50
Կ., պ. Աղաբէք Յովնանեանցից նուէր 85 ր.,
Ալեքսանդրապոլի բերդի պ. Կոմէնդանտից 5 ր.,
Ալեքսանդրապոլի պ. զաւառագետից 5 ր., Գըն-
դապետ Միշէնկոյից 5 ր., Մի քրիստոնեայ պա-
րոնից 25 ր.: Ընդամենը 401 ր. 50 Կ.:

Ծախս. Տոմարների զինուորներին կրկնութեանց և
ներկայացման համար 13 ր., նուաճուներին 28 ր.,
կուրբի լուսաւորութեան և ուրիշ կարեւոր ծախսեր
(տնտեսները զգալի զիջումներ արին) 13 ր., ման-
րածակս 5 ր. 40 Կ., կուրբի ծառաներին 5 ր.,
երկու այլ ծառայող անձանց 4 ր.: Ընդամենը 68
ր. 40 Կ.:

Բոլոր աֆիշները տպագրելու համար պ. Գէորգ
Սանդեանցը միայն մի հատ 1 ր. 50 Կ. արժո-
ղութեամբ տոմսակով բաւականացաւ:

Հանելով ծախսը մուտքից կը մնայ զուտ ար-
դիւնք երեք հարիւր երեսուն երեք բուրլի տասն
կոպէկ, (333 ր. 10 Կ.) որ զուամբը պարոն ու-
ղարկելով ձեռք, խնդրեմ բարեհաճէք հասցնել ըստ
պատկանելոյն:

Աւելացնում եմ այդ գումարի վրա տասն բուր-
լի, որ նուիրում է նոյնպէս յօգուտ վանայ սո-
վելոց տ. Հեղինէ Յովնանեանցի, նոյնպէս և
24 կոպէկ պ. Մարտիրոս Գրիգորեանցից, որ նոյն-
պէս յօգուտ սովելոց ձեռք ուղարկած փողի մնա-
ցորդն է: Ընդամենը կը ստանաք 343 բուրլի 34
կոպ., ճանապարհի ծախսը ինձ վրա հաշուելով:

Արիւմտում Յովնանեանց

ՆԱՄԱԿ ՊՈԼԻԱՆԿԻՑ

2 Ապրիլի

Ասկից յառաջ, այն է թերթերու կրօնամոլու-
թեան դարը, Տաճկաստանի թերթերու համար մի
սովորական վանան կար. երբ քրիստոնէի մը հետ
վէճի կամ դատի մտնելով, դատը կորսնցնէին, և
կամ քրիստոնէին իրաւունքը վաւերաւորու մը-
ձեւոր, իսկոյն կընէին. զիբնմէ սէօյտիւն (կրօնս
հայտնելի) և այս անկրաւ գրապարտութիւնը եր-
բէք չէր վրիպէր զանոնք իրենց նպատակին հասց-
նելու, և մեծ կարեւորութիւն կարուէր այս խօս-
քին, մասնաւոր մոլեռանդ դատարաններու յա-
տեան, որուն հետեանքն, ինչպէս յայտնի է, միշտ

քրիստոնէից իրաւանց ոտնակոխ ըլլալն էր: Գա-
լով հիմա, թերթեր նոր գրապարտութիւն մ'աւ գը-
տան և գործադրութիւնն ալ սկսան: Ինչ է այս
գրապարտութիւնը. — ապա տա մը թիւ և, և կար-
ծես վեհաժողովի (հայոց համար) տրամադրութեան
արդիւնքն է, քանզի գրեթէ նոյն ժամանակէ վերջ
սկսաւ ծագումն առնուլ սա: Ինչպէս շատ անգամ
փորձը ցցուց, ուր որ տեսնուեցաւ քրիստոնէի մը
իր կրօնը, ազգութիւնը և իրաւունքը պաշտպա-
նելը, հակառակ հին և արմատացեալ սովորու-
թեանց, իսկոյն ապստամբ համարեցին զանոնք,
վանս զի թերթերու ջղերուն կը դպչի քրիստոնէից
իրաւունք պահանջելը, և իսկոյն կաղաղակեն. ա-
պստամբեցան:

Ըսածիս օրինակը շատ է, բայց հոս անոնցմէ
մին իշխատակէն ալ աւելորդ չէ:

Մշոյ Պաւլոսի վիճակին դայմագամ հռչակա-
ւոր Հասան պէյ Զէրբէզը, որ թէ իր և թէ իր
արքանակաց ձեռք ամեն օրինապարտութիւն ի
գործ կը դնէ ի միաս հարստահարեալ հայ ժողո-
վրդեան, անցեալ օր, այն է մարտի 13-ին, յիշեա-
լին ժէնըէրմեիւրը, որը նոյնպէս չէրբէզ են, կորաջ
հայերէն կը սկսեն բռնի և խարազանի հարուած-
ներով յարդ ժողովել այնպիսի ժամանակ մը, որ
գիւղացիք իրենց անանտոց բաւական դարման չու-
նենալով, սկսած էին թանգ գնով գնել, ձորան եր-
կարութեան պատճառաւ: Բայց անհոգ չէրբէզը
ըստ հաճոյս կը կորոպսեն հայերն. կարգը կու-
գայ գիւղին քահանային, կը մտնեն սորա տունը,
յարդ կուգեն. քահանան չունենալ յայտնելով, կը
սկսի աղաչել, բայց չէրբէզը կը պնդէ թէ պիտի
տայ, ապա թէ ոչ կը պատժուի: Այս միջոցին
քահանան խոյս տալով կերթայ տեղոյն փոխ, ա-
ռաջնորդին իր ցաւը գանգատելու: Առաջնորդը
մարդ մը գրկելով, կը խնդրէ չէրբէզներէն, որ
քահանային խնայեն, և քահանան քովը կը թողու-
րայց չէրբէզները լուր կը տան դայմագամին թէ
քահանայ մը անհնազանդ գտնուած էր նրա հը-
րամանին, որուն համար բարկանալով դայմագամը
անձամբ կը գայ անդ, և իմանալով որ քահանան
ուր է, կը դիմէ հոն: Գեր. Առաջնորդը դիմաւո-
րելով նորան, կը խնդրէ խնայել քահանային: Բայց
սա կը սկսի զայրանալ և հետեանալ խօսքերը
կուղղէ ս. առաջնորդին, պէ՛հ հերթի մէն ասի սըն,
պէն սէնին սաքալէնը թրաշ խտրիմ, Այ՛ մարդ,
դու ապստամբ ես, ես քո մօրուքը կտրել կը
տամ: Այս ըսելով կը յարձակի, ուր գտնուող քանի
մ'անձինք հազիւ կը կարողանան մեղմանել զայն,
յետոյ շատ մը սպառնալիք և հայտնաբէ գնի
կը մեկնի: Ա. Առաջնորդը վախնալով, որ վայրե-
նին դաւ մը կը նիւթէ իրեն, ապաւնութեան հա-
մար գիշերը առաջնորդարանին երկիւր երկու
մարդ կը դնէ: Զէրբէզները գիշերուն ժամը եր-
կուքին տեսնելով զայս, լուր կը տան դայմագա-

թիւնի ընկերութեան և այլն՝ անունը: «Թով-
մաս եղբոր անակը», պ. Նազարեանց, այս, այդ
խմբի աշխատանքների արդիւնքն է, բայց այն էլ
խմբից, որ այդ աշխատանքը ներկայ ընկերու-
թեան խմբագրական մասնաժողովը ընդունել էր
իրեն համապատասխան այն պահանջներին, որին
զա պէտք է ծառայէ, հակառակ դէպքում այդ
աշխատութիւնը չէր կրի կառավարութիւնից հաս-
տատած «Ընկերութեան» անունը: Ես համոզված
եմ, որ եթէ «Մեղու» խմբագրութիւնը ուղարկու-
թիւն դարձնէր ձեռք վերոյիշեալ խօսքերի վրա,
հազիւ թէ նա կարող էր տեղ տալ նոյն իր լը-
րագրում, վանս զի, որքան յիշում եմ, «Մեղուն»
անցեալ տարի այդ խմբի աշխատանքները չափա-
զանց գովելը, ուրեմն այս տարի մի և նոյն «Մե-
ղուն» ձեռք յօդուածի միջնորդութեամբ չէր կա-
րող սանել. ուստի այս թարգմանութիւնից, ինչ-
պէս և իւր նախորդն էր շատ սպա-
սելիք և պահանջելիք չունենէ:

Ինչ արած. պ. Նազարեանցը կարողացաւ «Մե-
ղու» № 39 մէջ տպած յօդուածի նման մի քանի
յօդուածներ գրել և անկեղծաբար տպագրել, իսկ մի
փոքրիկ խումբը (զէպի որը կարծեմ պ. Նազա-
րեանց, կարելի էր վերաբերվել և առանց արհամար-
հանքի) կարողացաւ մի քանի, իր կարծիքով, լաւ
մանկական գրքեր ի տպ ընծայել: Նորան յաշուրից
կաղնիլ այժմեան մեծ անուն կողմ «Թիֆլիսի ըն-
կերութիւնը»: Ում աւելի է տուած, նորանից ա-
ւելի կը պահանջվի, միայն ես իմ կողմից ամեն-
եւն գոհ կը լինեմ, եթէ կառավարութիւնից հաս-
տատուած և կաղնիլեղութեամբ «Ընկերութիւնը»
կը շարունակէ ի տպ ընծայել մանկական գրքեր
նոյն իսկ ուղղութեամբ և նոյն տեսակ: Իսկ օրե-
որը Տէր-Մարկոսեանին կը ցանկամ շարունակել իր
սկսուած գեղեցիկ և համակրելի գործը՝ մանկական
գրքերի թարգմանութիւնը և ուղարկութիւնը չը
զարման ման մի տգէտ ընտելի վրա:

Գաբ. Միքայել

գրքերի հրատարակութեամբ, որ այնպիսի մի լե-
զուով գրած բնագիր էր տուել օրհորդին թարգ-
մանելու: Այսուհետ, գրեւէ կաղնիլեղութեամբ զն-
կերութիւնը մի և նոյն սեղանը չը գործի և պա-
տուէրներ տալու ժամանակ թարգմանութիւնների
համար աշքի առաջ ունենայ բնագիր լեզուն, որ
թարգմանողները չը չարարվին:

3) Միթէ այդքան էլ չէք իմանում, պ. Նազա-
րեանց, որ գործածելով մի օր և իցէ գաղափար
յայտնելու համար զանազան, բայց մի և նոյն նը-
շանակութիւն ունեցող բառեր, մենք լեզուին
աւելի արժանաւորութիւն ենք տալիս: Նորա մէջ
որ պատուելի օրհորդը մի տեղ գործ է անում
հանաք—միւս տեղ՝ կատակ, մի տեղ՝ աւելի
—միւս տեղ՝ գնէ, պ. Նազարեանցը մեծ պակա-
սութիւն է տեսնում: Ի սէր Աստուծոյ, պ. Նա-
զարեանց, մտածեցէ՛ք փոքր ինչ ձեր «Գրածի վրա»
ինչ կը վերաբերի նորա և նրա, վրայ և վե-
րայ բառերի չփոխելուն, իրաւացի նկատողութիւն
է, որ հարկաւոր է պահպանել միակերպութիւն և
եթէ պ. Նազարեանցը իրան նեղութիւն տայ և
թերթէ «Թովմաս եղբոր անակը», նա կը նկատէ,
որ այդ չփոխութիւնը միայն առաջին 8 երեսների
մէջ, այսինքն առաջի տպագրական շարուածքի
մէջ է և հետեւեալ երեսներում միայն հինգ թէ-
վեց անգամ կրկնուած է նրանց փոխանակ նո-
րանց, այն ինչ նորանց, վերայ և այն հա-
րիւրներով են պատահում: Չը բացատրենք ար-
դեօք այդ նորանով, որ առաջին 8 երեսների մէջ
մտել է այդ չփոխութիւնը սրբագրողի ջնորհիւ, որը
երկր, կամեցել է մտցնել իր ուղղագրութիւնը և
«Թովմաս եղբոր անակ» մէջ, այլապէս և մնա-
ցած 72 երեսների մէջ մի և նոյն չփոխութիւն կը
լինէր: Ուրեմն, պ. Նազարեանց, այդ չփոխութիւ-
նը, ինչպէս դուք գիտւմ էք, գրքի մէկ ծայրից
մինչև միւս ծայրը չէ:

4) Պ. Նազարեանցը, վերջացնելով իր յօդուա-
ծը, նկատում է, որ ամբողջ թարգմանութիւնը ի

է տաւական, կէտ աղբաւան և առողա-
նական սխալներով: Առանց փաստերի խօսել ի
հարկէ շատ հեշտ է, կամ թէ ասածը՝ այսպիսի օ-
րինակներով հաստատել. չէ կարելի ասել. «Հաս-
կանում ես ինձ», այլ պ. Նազարեանցի կարծիքով
անշուշտ հարկաւոր է ասել. «Հասկանում ես իմ
ասածը», ապա թէ ոչ հայերէն խօսած չես լինի.
կամ չէ կարելի ասել. «Եթէ օրհնէ քեզ Աստուած...»
այլ հարկէ էր ասել. «Աստուած օրհնէ քեզ...» և
այլն այսպիսի դատողութիւնների և օրինակների
ամբողջ մի շարք: Ողորմելի ընտելի... Պ. Նազա-
րեանցը կէտ աղբաւան կանոնների վրա է
խօսում, բայց ինքը կարծում է, որ—«Աղջիկը
հօր հետ, կանգնած չողենաւ ի մէջ, նա-
յում է ին...» նախադասութիւնից հասկացվում
է այն, որ ոչ թէ աղջիկը և հայրը կանգնած էին
չողենաւ մէջ, այլ չողենաւ էր կանգնած: Այդ,
պ. Նազարեանց, այդպէս կարելի էր կարծել միայն
այն ժամանակ, երբ այդ նախադասութեան մէջ
ստորակէտներ չը լինէին, իսկ երբ հօր հետ—ից
յետոյ և «մէջ»-ից յետոյ ստորակէտներ կան, այդ-
պէս չէ կարելի հասկանալ:

5) Վերջապէս, պ. Նազարեանց, դուք գիտէք
քաղաքավարութիւն ասած բանը ինչ է:
Վերջին միջոց ծախող (կրկնում) չի թոյլ տայ իրան
գիմել որ և իցէ հաստակաւոր օրհորդին և ասել.
որ նա մի մանուկ է. չափ հասկացողութեան
թիւն չունի: Իսկ դուք, որ ձեռք մի լրագրի
մշտական աշխատակից էք համարում, բանասեր-
ների կարգի մէջ էք դասում, թոյլ եք տալի ձեռք
հետեւեալը*) «մեր յարգելի օրհորդը գրքէ թարգ-
մանում և նուիրում է հայ մանուկներին. բայց
նոյցաւ չափ ևս չի կամենում հասկացող

*) Դիմել այդպէս թէ օրհորդին և թէ տղամար-
դիկներին—մի և նոյն անդադարաւարութիւն է: Ա-
լեւայնում եմ այս խօսքերը, վախնալով, որ դուք
չը կարծէք թէ ձեռք դաւանակի կամ վարչութեան
թիւն չունի: Իսկ դուք, որ ձեռք մի լրագրի

երևալ, որովհետև նոյն բաւական լաւ են հաս-
կանում, թէ ինչպէս պէտք է խօսել մի գործո-
ղութեան մասին, որի կատարելն արգելվում է:
Այդպէս հան մեր թարգմանչուհին ասում է. «մի
ցաւացու, մի մեւր, մի վրդովք, մի անուա-
նէք...» փոխանակ ասելու. «մի ցաւացի, մի
մեւր, մի վրդովք, մի անուանել...»)

Գիտեցէ՛ք այսուհետ, պ. Նազարեանց, որ դո-
րան անուանում են անքաղաք և վարչութիւն
—քաղաք և վարչութիւն տգիտութիւն... աւելի ա-
ւելիք չունեմ դորա մասին:

Վերջացնելով յօդուածս մի նկատողութիւն ևս
ունեմ անելու պ. Նազարեանցին, որին հազիւ թէ
միւս անգամ կը դիմեմ, վախնալով, որ կարող
եմ նորանից փողոցային յիշողներ ևս լսել: Մի
մարդուց որ ընդունակ է մի օրհորդին առանց որ
և իցէ պատճառաւ վրեւտօրեւ, կարելի է ամեն բան
սպասել...:

Գուք, պ. Նազարեանց, ձեր յօդուածի սկզբում
մի արհամարհական կերպիւր ասում էք. «Թով-
մաս եղբոր տնակը թիֆլիսի ընկերութեան
թիւն չունի գործիչ է. միայն ոչ
նեւրկայ ընկերութեան, այլ նորա
նոր սկսված ժաւապաւիւն չը կաղ-
մակ կը պղծած ժաւապաւիւն ևս ընկե-
րութեան անուն կը դրմի մի երկու
անձանց աշխատանքներ ի արդիւնքն է: Ուստի այս
թարգմանութիւնը ոչ թէ մի երկու ան-
ձից, այլ 4—5-ից և այդ խումբը երբէք չէ կրել

*) Ի հարկէ պ. Սո. Պալասանեան էլ ոչ երե-
կայի չափ է հասկանում, ոչ էլ Նազարեանցի
չափ հայերէն լեզու գիտէ, որովհետև նա իր հա-
յերէն լեզուի քերականութեան մէջ մի վրդովքը,
«մի անուանէք» և այլն ձեռք ընդունելու

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Երբ նախքան կը վաճառվի, գինն կուղարկվի րաւ պատկանելութեան:

